«Mount Auburn»-ում մենք ջանք չենք խնայում մեր հիվանդներին գերազանց և բարձրորակ բուժսպասարկում տրամադրելու համար: Եթե հիվանդանոցում գտնված ժամանակ Դուք զգաք, որ դա այդպես չէ, խորհուրդ ենք տալիս ուղղակի խոսել Ձեր բուժքրոջ, Ձեր բժշկի կամ մենեջերի հետ, եթե որևէ մտահոգություն ունենաք: Կարող եք նաև Ձեր մտահոգության կամ գանգատի մասին հայտնել հիվանդների հետ հարաբերությունների բաժնին՝

Patient Relations Office
Mount Auburn Hospital
330 Mount Auburn Street
Cambridge, MA 02138
Հեռախոս՝ (617) 499-5100
Patientrelations@mah.harvard.edu

Դուք իրավունք ունեք նաև պաշտոնական բողոք ներկայացնելու հետևյալ կազմակերպություններին.
• Մասաչուսեցի հանրային առողջապահության դեպարտամենտի բուժսպասարկման որակի բաժին

MA Department of Public Health
Division of Health Care Quality
99 Chauncy Street, 2nd Floor
Boston, MA 02111
Հեռախոս՝ (617) 753-8000 կամ (800) 462-5540

• Որակի վերահսկման համատեղ հանձնաժողովի գրասենյակ
The Joint Commission's Office
of Quality Monitoring
Հեռախոս՝ (800) 994-6610
Էլ. փոստ՝ complaint@jcaho.org

• Եթե Դուք «Medicare»/«Medicaid» ունեք՝
MassPro
235 Wyman Street
Waltham, MA 02451
Հեռախոս՝ (800) 252-5533

ՀԱՅՏՆԵ՛Ք ՄԵԶ

«Mount Auburn» հիվանդանոցում յուրաքանչյուրն իր դերն ունի Ձեր բուժսպասարկումն ապահով դարձնելու հարցում: Որպես հիվանդ՝ Դուք նույնպես կարևոր դեր ունեք այդ հարցում՝ •որձուն և տեղեկացված մասնակցություն ցույց տալով Ձեր բուժսպասարկմանը: Մենք Ձեզ խորհուրդ ենք տալիս...

Հայտնել մեզ, եթե հարցեր կամ մտահո•ություններ ունեք Ձեր բուժսպասարկման կապակցությամբ: Եթե չհասկանաք, կրկին հարցրեք:
Մենք ժամանակ ունենք Ձեր հարցերին պատասխանելու համար:

Ուշադրություն դարձնել Ձեր ստացած խնամքին և բուժմանը: Ոչ մի անհարմար բան չկա, եթե հանցնեք, թե Ձեզ ինչ են տալիս և ինչ պետք է ակնկալել:

Քաջատեղյակ լինել Ձեր հիվանդությանը և բուժմանը՝ այդ մասին տեղեկություններ հավաքելով:

Ձեր ընտանիքի որևէ անդամի կամ բարեկամի խնդրել Ձեր պաշտպանը լինել:

Իմանալ, թե ինչ դեղեր եք ընդունում, ինչպես նաև՝ ինչու և երբ եք դրանք ընդունում:

Հասկանալ, որ Դուք իրավունք ունեք մտահոգություն հայտնելու Ձեր բուժսպասարկման և ապահովության վերաբերյալ և արագ պատասխան ստանալու: Մենք ուրախ կլինենք լսելու Ձեր դիտողությունները:

Մասնակցելու Ձեր բուժման կապակցությամբ բոլոր որոշումների կայացմանը:

Կազմված է Համատեղ հանձնաժողովի «Հայտնե՛ք մեզ» փաստաթղթի հիման վրա

Հիվանդի իրավունքները և պարտականությունները

MOUNT AUBURN
HOSPITAL

«Harvard Medical School»-ի իրազեկիչ հիվանդանոց

330 Mount Auburn Street, Cambridge, MA 02138
www.mountauburnhospital.org

Design and Printing by
Mount Auburn Hospital Graphic Arts Department
Brochure 20a, Rev. 3/21/13
Based on English version 3/21/13

MOUNT AUBURN
HOSPITAL

«Mount Auburn» հիվանդանոցի նպատակն է Ձեզ բարձրագույն մակարդակի բուժսպասարկում և ծառայություններ մատուցել: Մենք ցանկանում ենք համագործակցել Ձեզ հետ՝ ապահովելու համար, որ մեր հիվանդանոցում Դուք Ձեզ լավ ու ապահով զգաք և արժանանաք հարգալից վերաբերմունքի: Massachusetts նահանգում գործում է օրենք, որը երաշխավորում է Ձեր՝ որպես հիվանդի իրավունքները, ինչպես նաև բացատրում հիվանդի պարտականությունները: Այդ կարևոր օրենքի ամբողջական օրինակը (Գլուխ 111, Բաժին 70E) փակցված է Ընդունարանի և Շտապ օգնության բաժանմունքի սպասասրահներում: Այս գրքույկում ընդհանուր գծերով ներկայացվում է այդ օրենքը և մեր պարտականությունները հիվանդների նկատմամբ:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Տեղեկությունների ստացումը և որոշումների կայացումը

Դուք իրավունք ունեք...

• իմանալու Ձեր բուժմանը մասնակցող բոլոր անձանց անունները, դերը և մասնագիտությունը.
• օրենքով սահմանված կարգով՝ Ձեր բժշկական տվյալների գաղտնիության ապահովման.
• պարզ և հասկանալի բացատրություն ստանալու Ձեր ստացած բուժսպասարկման և բուժումների մասին.
• մասնակցելու Ձեզ տրամադրվող բուժսպասարկման կապակցությամբ կայացվող որոշումների կայացմանը, այդ թվում՝ տեղեկացված համաձայնության գործընթացին՝ օրենքով նշված կարգով.
• հարգալից վերաբերմունքի արժանանալու.
• «առողջապահական լիազորագիր» կազմելու.
• ծանոթանալու Ձեր բժշկական գործին և պահանջելու դրա օրինակը.
• մտահոգություն հայտնելու Ձեր ստացած բուժսպասարկման և ապահովության կապակցությամբ և շտապ պատասխան ստանալու այդ վերաբերյալ:

Մենք ուրախ կլինենք լսելու Ձեր դիտողությունները:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բուժումը և խնամքը

Դուք իրավունք ունեք...

• առանձնության՝ Ձեր բուժման ընթացքում՝ հիվանդանոցի ունեցած հնարավորությունների սահմաններում.
• առանց վտանգելու բուժսպասարկում ստանալու Ձեր իրավունքները՝ հրաժարվելու ուսանողների կամ հիվանդանոցի աշխատակիցների կողմից անցկացվող ստուգումներից, զննումներից կամ բուժումից.
• հրաժարվելու մասնակցել բժշկական փորձարկումների.
• ցավերի դեպքում՝ շտապ օգնություն ստանալու մեր բուժանձնակազմի կողմից.
• շտապ բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում՝ Ձեր կյանքը փրկելու անհապաղ միջոցառումների՝ անկախ Ձեր տնտեսական վիճակից կամ վճարման աղբյուրից.
• տեղեկությունների տրամադրման և շտապ հակաբեղմնավորման, եթե Ձեզ բռնաբարել են.
• եթե Դուք կրծքի քաղցկեղ ունեք, Դուք իրավունք ունեք ամբողջական տեղեկություն ստանալու բոլոր այն բուժումների մասին, որոնք բժշկական առումով նպատակահարմար են Ձեր դեպքում.
• եթե Դուք պատրաստվում եք ծննդաբերել, ապա Դուք իրավունք ունեք ամբողջական տեղեկություն ստանալու ծննդաբերության տարբեր եղանակների մասին.
• չենթարկվելու Ձեր իրավունքների սահմանափակման կամ մեկուսացման, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում է ապահովության նկատառումներով.
• ստանալու «Mount Auburn» հիվանդանոցի չափորոշիչներին համապատասխանող բարձրակարգ բուժսպասարկում՝ անկախ Ձեր ռասայական պատկանելիությունից, դավանանքից, որևէ հաշմանդամությունից կամ անկարողությունից, սեռից, սեռական կողմնորոշումից, սեռական պատկանելիության ինքնազգացողությունից և դրա արտահայտման ձևերից, զինվորական կարգավիճակից և/կամ Ձեր բուժսպասարկման համար տրամադրվող վճարման աղբյուրից:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հարցերը

Դուք իրավունք ունեք...

• իմանալու, թե արդյոք Ձեր բժիշկը նյութական կամ որևէ այլ տիպի շահերի բախում ունի՝ կապված Ձեր բուժսպասարկման հետ.
• տեղեկություններ պահանջելու և ստանալու նյութական օգնության կամ անվճար բուժօգնության մասին.
• պահանջելու և ստանալու Ձեզ ներկայացված մանրամասն հաշիվը և դրա բացատրությունը:

Անձնական հարցերը

Դուք իրավունք ունեք...

• այցելուներ ընդունելու կամ նրանց մերժելու.
• թարգմանչի ծառայությունների և/կամ հատուկ սարքերի, եթե Դուք բավարար չափով չեք տիրապետում անգլերենին, խուլ եք կամ ծանր եք լսում և/կամ վատ եք տեսնում.
• հայտնելու մեզ, թե ինչ կերպ եք Դուք ցանկանում, որ Ձեր ընտանիքի (Ձեր կողմից սահմանված) անդամները մասնակցեն Ձեզ տրամադրվող խնամքին և որոշումների կայացմանը, եթե ընդհանրապես ցանկանում եք, որ նրանք մասնակցեն.
• հոգևոր աջակցություն ստանալու՝ հիվանդանոցում •տնված ժամանակ.
• ծանոթանալու Ձեր բժշկական գործին և/կամ ստանալու դրա օրինակը: Որոշ հազվագյուտ հանգամանքներում մենք կարող ենք մերժել Ձեր պահանջը, սակայն Դուք կարող եք պահանջել, որ այդ մերժումը վերանայվի: Հիվանդանոցը կարող է պատճենահանման համար վճար գանձել, որի չափը սահմանափակված է նահանգի օրենքով:

ՁԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես հիվանդ՝ Դուք պարտավոր եք...

• ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ տրամադրել Ձեր հիվանդության պատմության վերաբերյալ.
• տեղյակ պահել որևէ բժշկի կամ բուժքրոջ, երբ Դուք Ձեզ ավելի լավ կամ ավելի վատ եք զգում, հատկապես՝ երբ Ձեր ինքնազգացողության մեջ անսպասելի փոփոխություն է տեղի ունենում.
• համագործակցել Ձեր բուժմանը մասնակցող բուժանձնակազմի հետ.
• հայտնել մեզ, եթե Դուք որևէ մտահոգություն ունեք որպես հիվանդի՝ Ձեր ապահովության կապակցությամբ.
• հարգել այլ հիվանդների իրավունքները,

այդ թվում՝ օգնել պայքարել աղմուկի դեմ.

• հարգել հիվանդանոցում գործող կարգը, որի նպատակն է ապահովել Ձեր, այլ հիվանդների և այցելուների ապահովությունն ու հարմարավետությունը.
• ճշգրիտ և ճշմարտացի տեղեկություններ տրամադրել մեզ՝ Ձեր ապահովագրության կամ դրա բացակայության վերաբերյալ.
• Ձեր հնարավորության սահմաններում՝ կատարել վճարումները:

• • • •